նախագրած խորհրդոյ Պատրիարքին իւրոյ. եւ այնպէս հաստատեալ զպայմանս դաշինն, և սոյն օրինակաւ յայտնեալ իցեն զգաղանիս իւրեանց։

Իսկ Հ. Մ. Զամչեան՝ այլով իմն եղանակաւ աւանդէ զոյս պատմութիւն խոտորման Զատկի. Տէս Պատմ. Հայոց, Հատ. Գ. Երես 804։ Որպէս թէ ծախեալ իցեն 'ի դրունս բազում ինչ յերկուց կողմանց, խրոխտալ 'ի վերայ միմեանց և թշնամանել բանիւք զկծանաց, և լինել մեծամեծ աղմուկաց, և 'ի հասանիլ տօնի Զատկին՝ սպանանել երկու ոգիք 'ի Հայոց, և երկու եւս 'ի Յունաց։ Այլ այսոքիկ բանք ոչ նշմարին 'ի գրչագիր օրինակս մեր եւ ոչ 'ի գատաստանական գիրս, որք պահին առ մեզ, բաց յայնց խառվութեանց որք յետոյ պատահեցան 'ի գաւառս, զորոց հանդերձեալ եմք ասել։ Թէպէտեւ աղօտ իմն նշմարի 'ի նամակիս Գրիգորի, այլ կատարեալն և ստոյգն ոչ հասին 'ի ձեռս մեր։ Այլ մեք թողեալ զայսպիսի վայրապար քննութիւնս՝ մատիցուք պատմել որք զկնի այսմ պատահեցան։

ԳԼՈՒԽ Դ.

Դէնդութիւն Յունաց։ Խռովութիւն Ժողովրդոյ յարեւելեան գաւառս։ Վէճ Լատինաց։ Մահ Աթոռակալ Հաննա վարդապետի։ Վիշտ Գրիգոր Պատրիարքի։

Յետ կատարելոյ զտօն Պասեքին յԵրուսաղէմ, ուխտաւորք Հայոց և Յունաց ցրուեալ գնացին յիւրաքանչիւր գաւառս և 'ի քաղաքս իւրեանց։ Իսկ Պատրիարքունք Յունաց Պասիոս Կոստանդինուպօլսի՝ և Խրիսանթոս Երուսաղէմի՝ մատուցին գիր ամբաստանութեան 'ի Դուռն զաղգէն Հայոց, և ասեն թէ՝ յետ մեկնելոյ յԵրուսաղեմէ ուխտաւորացն՝ գնացեալ յիւրաքանչիւր գաւառս և 'ի քաղաքս, և ոչ ճանաչելով զչափ անձանց իւրեանց և հանդարտիլ խաղաղութեամբ, մատեան առ դատաւորս և առ իշխանաւորս քաղաքաց՝ ատելութեամբ բանսարկու եղեն զաղգէն Յունաց, թէ նոքա ոչ կարացին ուղիղ տօնել ըզ-